

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 42/11**

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ քաղաքացի Վարդան Մկրտումյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Քաղաքացի Վարդան Մկրտումյանը հայտնում է, որ սույն թվականի մարտ ամսին ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ-ից ստացել է թիվ Վ/840/2018/ՓԾ ծանուցագիրը, որով առաջադրվել է իրեն 200.000 դրամ գումարի չափով պարտավորություն:

Ծանուցագրում հարկային օրենսդրության ինչ-որ կետերի, ենթակետերի, հոդվածների նշումներով իրեն պարտադրված այդ գումարի չափով գումարն այն բանի համար է եղել, որ նա իր մեքենան վաճառել է և նորը գնել: Իսկ մեկ տարվա ընթացում նոր գնվածը նորից վաճառել է: Քաղաքացին հայտնում է, որ նա օրենքը սիրող ու հարգող մարդ է, եթե այդ մասին տեղյակ լիներ, բնականաբար նման բան չէր անի, մի քիչ կսպասեր նոր կվաճառեր: Մեքենայի վաճառքն իր համար նման գործունեությամբ զբաղվելու հոբի կամ եկամուտ ստանալու միջոց չի եղել: Նման քայլի նա դիմել է ստիպված, հետևյալ նպատակով՝ ավելի քան տասը տարի է իր բնակելի տան շինարարությունը չի կարողացել ավարտել գումար չունենալու պատճառով: Այսինքն, իրականացնի նվազագույն նորմալ բնակելի միջավայր ունենալու իր սահմանադրական իրավունքը, որը հռչակված է մարդու հիմնարար իրավունքներում, որը ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության մեջ: Եթե սահմանադրությունը սահմանում է, որ պետության հիմնական ու առաջնային խնդիրը պետք է լինի պաշտպանել ու հովանավորել ընտանիքը, նպաստել, որ յուրաքանչյուր ընտանիք ապրի արժանապատիվ, նորմալ բնակարանային պայմաններում, ապա ինչու է խոչընդոտում, որ նա իր ընտանիքի նվազագույն բնակարանային պայմաններում ապրելու իրավունքը իրականացնի: Սահմանադրությունն ասում է, որ մարդու բնակարան ու բնակելի նորմալ միջավայր ունենալու իրավունքը դա բնական իրավունք է, որին դեմ գնալ ու խոչընդոտել չի կարող ոչ մի պետական մարմին ու պաշտոնատար անձ: Սահմանադրությունը բխում է իրավունքից, օրենքը Սահմանադրությունից: Իսկ գերական բնական իրավունքն է, որն իրականացվում է Սահմանադրությամբ: Իրավունքի տեսությունը սահմանում է, որ եթե օրենքը հակասում է բնական իրավունքին, ուրեմն օրենքն է սխալ: Հետևաբար, 200.000 ՀՀ դրամ գումարի պարտադրանքն իր պարագայում անարդարացի է, քանի որ իրավական գործունեության մեջ իրավունքի գերակայության սկզբունքը չպետք է ստորադասվի պետության կողմից սահմանված օրենքի նորմից: Մարդը, նրա արժանապատվությունը (տվյալ պարագայում նորմալ բնակարանային պայմաններում ապրելու իր իրավունքը) ՀՀ սահմանադրությամբ բարձրագույն արժեք է, որի դեմ պետությունն իրավունք չունի օրենքով կամ որևէ

ենթաօրենսդրական ակտի նորմով խոչընդոտել: Քաղաքացին նշում է նաև, որ նա ոչ թե հսկա առանձնատան, այլ նվազագույն բնակարանային պայմանների հարց է լուծում:

Քաղաքացին նշում է, որ երկու հարյուր հազար դրամի պարտավորության դեմ նա ընդհանացել ու երկու անգամ գրավոր դիմել է, որ դա ապօրինի պահանջ է, բայց մերժվել է վկայակոչելով օրենքը:

Հաշվի առնելով շարադրվածը, քաղաքացի Վարդան Մկրտումյանը խնդրում է չեղյալ համարել 20.03.2018թ.-ի թիվ Վ/840/2018/ՓԾ ծանուցագրով առաջադրված 200.000 ՀՀ դրամ գումարի պարտավորությունը:

## **2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ճանապարհային ոստիկանությունից ստացված տեղեկությունների, դրանց հիման վրա հաշվարկված պարտավորությունների վերաբերյալ բացատրություններ ներկայացնելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին իրազեկելու նպատակով ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ կողմից քաղաքացի Վարդան Մկրտումյանին է ուղարկվել թիվ Վ/840/2018/ՓԾ ծանուցագիրը:

Նշված ծանուցագրով տեղեկացվել է, որ ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով ԱԱՀ-ի գծով հաշվարկվել է ընդամենը 200.000 ՀՀ դրամ:

Ծանուցագրի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառուց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է, տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Միաժամանակ ծանուցագրում նշվել է նաև, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածին համապատասխան հանդիսանալով ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող՝ քաղաքացին պարտավոր է ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկները ներկայացնելու, գումարների վճարման կարգը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 199-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմին ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը:

Ուստի վերը նշված հաշվարկը չներկայացնելու արդյունքում՝ այլ հավասար պայմաններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկման ենթակա հարկային պարտավորության գումարը 20.03.2018 թվականի դրությամբ կազմում է ընդամենը 198831 ՀՀ դրամ, որից հարկի գումար՝ 166700 ՀՀ դրամ, տույժ՝ 7126 դրամ, տուգանք՝ 25005 ՀՀ դրամ:

## **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունից ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Վարդան Մկրտումյանը 2017թ. ընթացքում վաճառել է սեփականության իրավունքով իրեն պատկանող թվով 2 (երկու) տրանսպորտային միջոց: Մասնավորապես, Վարդան Մկրտումյանի կողմից 27.09.2017թ. վաճառվել

է «Mercedes-Benz C 200» մակնիշի տրանսպորտային միջոցը, որը ձեռք է բերել 12.10.2016թ.: Այնուհետև, 01.11.2017թ. նրա կողմից վաճառվել է «Honda Elysion 2.4» մակնիշի տրանսպորտային միջոցը, որը ձեռք է բերել 26.09.2017թ.:

Հանձնաժողովը գտնում է, որ Վարդան Մկրտումյանի կողմից «Honda Elysion 2.4» մակնիշի ավտոմեքենայի 01.11.2017թ. կատարված վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Վարդան Մկրտումյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ քաղաքացի Վարդան Մկրտումյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ